ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1919-1920 ԹԹ.)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.258

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում անդրադարձել ենք Աշտարակ քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին, դրանց կազմակերպման իրավական հիմքերին և սկզբունքներին: Լուսաբանվել է առկա սոցիալ-տնտեսական մարտահրավերները և վերջիններիս հաղթահարման ուղղությամբ քաղաքային իշխանությունների ձեռնարկած միջոցները:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ Աշտարակի նորաստեղծ ՏԻՄ-ը գործել է չափազանց բարդ և անկայուն սոցիալական միջավայրում: Սովը, համաճարակը, գործազրկությունն ուղղակիորեն խոչընդոտում էին քաղաքի արդյունավետ կառավարմանը, սակայն քաղաքային իշխանությունների գործադրված ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ լուծել մի շարք օրակարգային հարցեր, մասնավորապես՝ կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ, բնակչության կարիքների բավարարման համար ձեռք բերել կենսական նշանակության ապրանքներ, գնաճը զսպելու նպատակով սահմանել սակագներ, վերաբացել դպրոցներ, գրադարան և այլն:

Կարող ենք փաստել, որ չնայած երկրում տիրող սոցիալ-տնտեսական և հոգեբանական ճգնաժամային իրադրության, ինչպես նաև համապատասխան փորձառության պակասի, իրավագիտակցության ցածր մակարդակի պայմաններում Աշտարակի քաղաքային իշխանության մարմինները հիմնականում գործել են հանրային պատասխանատվության սկզբունքի համաձայն և նպաստել են սոցիալական կայունության հաստատմանը:

Այսպիսով՝ Աշտարակի ՏԻՄ-ի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքային կառավարման արդյունավետությունը նախ և առաջ պայմանավորված է մարտահրավերիներին արագ և համակարգված արձագանքելու կարողությամբ, ինչպես նաև քաղաքացիների՝ համայնքի գործերին մասնակցելու պատրաստակամությամբ:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Տեղական ինքնակառավարման մարմիններ, Աշտարակ, ընտրություն, քաղաքային խորհուրդ, վարչություն, քաղաքագլուխ, կենտրոնական իշխանություններ, պարենավորում, կրթություն, ճգնաժամ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմը և դրան հաջորդած սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը բացասական ազդեցություն ունեցան հայ բնակչության կյանքի որակի վրա: Առկա մարտահրավերների հաղթահարումը նորանկախ ՀՀ իշխանությունների համար դարձավ առաջնային նպատակ, որին էր ուղղված մի շարք բարեփոխումների մշակումը և իրագործումը: Համապարփակ բարեփոխումներն առնչվում էին նաև տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը և արդյունավետ գործունեությանը:

ՀՀ-ում ձևավորված ՏԻՄ համակարգում իր ուրույն տեղն է զբաղեցնում Աշտարակի ՏԻՄ-ը, որի գործունեության մասին հայ պատմագրության մեջ գրեթե բացակայում է ամբողջական ուսումնասիրություն:

Մեր նպատակն է ոչ միայն լուսաբանել մեր պատմության մոռացված էջերը, այլ նաև ցույց տալ ՏԻՄ-երի կարևորությունը համայնքային կյանքի հիմնախնդիրների լուծման համատեքստում, ընդգծել տեղական ժողովրդավարության և մասնակցային կառավարման առավելությունները:

Աղբյուրագիտական տեսակետից հոդվածի շարադրանքում հիմնականում օգտագործվել են արխիվային փաստաթղթեր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդաբանական առումով հոդվածը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաքննական և պատմահամեմատական մեթոդներով՝ համադրելով և վերլուծելով առկա արխիվային նյութերը, հրապարակված սկզբնաղբյուրների, գիտական ուսումնասիրությունների տվյալները: Միաժամանակ հանդես ենք եկել անկողմնակալ դիրքերից՝ առանց քաղաքական և կուսակցական նախասիրությունների:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համաձայն կենտրոնական իշխանությունների հաստատած համապատասխան իրավական կարգավորումների՝ ՀՀ-ում նախատեսվում էր ներդնել երկմակարդակ ՏԻՄ համակարգ (գավառային և քաղաքային ՏԻՄ-եր): Կառավարությունը, հաշվի առնելով քաղաքային կարգավիճակ ունեցող բնակավայրերի սակավաթիվ լինելը, 1919 թ. մայիսի 20-ին որոշեց Աշտարակին, Վաղարշապատին, Դիլիջանին, Մեծ Ղարաքիլիսային, Ջալալօղլիին, Ղամարլուին, Իգդիրին և Կողբին (Սուրմալուի գավառ) տալ քաղաքային կարգավիճակ: 1919 թ. մայիսի 23-ին օրենսդրական լիազորություններով օժտված ՀՀ կառավարությունը հաստատեց մեկ այլ կարևոր օրենսդրական ակտ՝ «ՀՀ մի քանի վայրերում քաղաքային կանոնադրություն մտցնելու մասին» օրենքը: Այն ենթադրում էր վերոնշյալ քաղաքներում ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, համամասնական ընտրակարգով կազմակերպվել ՏԻՄ-ի ընտրություններ. 20 տարին լրացած քաղաքացիներն առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, ուղղակի և հավասար քվեարկությամբ ընտրելու էին քաղաքային խորհրդի անդամներ՝ իրավասուներ (ավագանու անդամներ), որոնք էլ իրենց հերթին ընտրելու էին գործադիր մարմին՝ քաղաքային վարչություն (այսուհետև՝ Վարչություն)՝ քաղաքագլխի նախագահությամբ **(Ասատրյան Ս. , 2018)**:

Աշտարակ քաղաքի ՏԻՄ ընտրությունները

Աշտարակի քաղաքային խորհրդի ընտրությունները կայացան 1919 թ. օգոստոսի 17-ին, որում ՀՅԴ տարավ վճռորոշ հաղթանակ **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33,**

թ. 34): ՀՅԴ համամասնական ցուցակից իրավասուներ ընտրվեցին Սմբատ Խաչատրյանը, Հովհաննես Փարնանյանը, Արամ Աղաջանյանը (որին 1920 հունվարից փոխարինեց Խաչիկ Սաթունյանը) Վաչագան Շահազիզյանը, Գրիգոր Ներսիսյանը, Ավետիս Մկրտչյանը, Գրիգոր Ներսիսյանը, Գեղամ Ղափանցյանը, Աշոտ Սաժումյանը, Շահազիզ Շահազիզյանը, Թեոդորոս Շահազիզյանը, Պարյուր Շահազիզյանը, Գարեգին Վարդազարյանը, Գարեգին Ղուլչյանը, Մամիկոն Տեր-Հովհաննիսյանը, Գարեգին Արամյանը, Թեոդորոս Պետրոսյանը, Չալիկո Արամյանը **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 4, 25)**: Ձայների մեծամասնությամբ քաղաքային խորհրդի նախագահ ընտրվեց Վաչագան Շահազիզյանը (ՀՅԴ), իսկ քարտուղար՝ Մամիկոն Տեր Հովակիմյանը, որին հետագայում փոխարինեց Հ. Ներսիսյանը:

Քաղաքային խորհուրդը ձևավորեց հանձնաժողովներ՝ դպրոցական, շինարարական, բժշկա-սանիտարական և այլն: Իրավասուներն ընտրեցին նաև Վարչության անդամներ. քաղաքագլուխ դարձավ հայտնի բժիշկ Վաղարշակ Նահապետյանը (նկ. 1), իսկ վարչության անդամներ՝ Նիկողայոս Թումանյանը և Հմայակ Շահազիզյանը: Վերջիններիս հրաժարականներից հետո, նրանց փոխարինեցին Հովհաննես Փարվանյանը և Շահազիզ Շահազիզյանը **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 35)**:

Ըստ մեր ուսումնասիրությունների՝ ՀՅԴ կուսակցությունը միանձյա ստանձնել է քաղաքի կառավարումը: Ի պատասխան այն հարցին, թե արդյո՞ք ընդդիմությունը նախընտրական կամ հետընտրական գործընթացներ ծավալել է, ցավոք, դրա մասին մեզ չի հաջողվել որևէ փաստական նյութ գտնել թե՛ մամուլում, թե՛ արխիվային նյութերում. այն դեպքում, երբ այլ քաղաքների՝ ՏԻՄ ընտրություններում ընդդիմության մասնակցության վերաբերյալ բավարար նյութեր կան ամբարված և՛ ժամանակի մամուլում, և՛ արխիվային փաստաթղթերում: Հետևաբար, կարող ենք, եզրահանգել, որ Աշտարակի ՏԻՄ ընտրություններին ընդդիմադիր ուժեր կամ չեն մասնակցել, կամ վերջիններիս մասնակցությունը եղել է աննշան՝ առանց տեսանելի արդյունքի:

1919-1920 թթ. քաղաքային խորհրդի գումարած նիստերում քննարկվեցին և իրենց լուծումները ստացան քաղաքի կենսագործունեությանն առնչվող մի շարք հարցեր: Սակայն ակներև է, որ քաղաքային խորհուրդը չէր գործում բնականոն և երբեմն քվորում չլինելու պառճառով որոշ հարցերի քննարկումներ հետաձգվում էին (**ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 5**):

Նկ.1 Քաղաքագլուխ Վաղարշակ Նահապետյան

Աշտարակի հիմնախնդիրները և քաղաքային իշխանությունների ձեռնարկած միջոցները վերջիններիս լուծման ուղղությամբ

Նորաստեղծ ՏԻՄ գործունեության հիմնական առանցքը դարձավ **պարենավորման, բժշկասանիտարական ոլորտները, իրավակարգի պահպանման, կրթական, գործազրկության, գնաճի դեմ պայքարը**: Դրա մասին է վկայում 1919 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին քաղաքային խորհրդի կողմից քննարկված և հաստատված 1919 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների քաղաքային բյուջեի (նախահաշիվ) ուսումնասիրությունը: Ըստ նախահաշվի ելքային մասի՝ մունիցիպալ իշխանությունները նախատեսում էին իրենց միջոցները գրեթե հավասարաչափ բաշխել երկու կարևոր ոլորտների՝ ոստիկանության (73000 ռ.) և հանրային կրթության (70000 ռ.) համակարգերի պահպանման և զարգացման վրա, որոնց հաջորդում էր քաղաքի բարեկարգման

(40000 ռ.) և բժշկասանիտարական ծախքերը (30000 ռ.) **(ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 26)**:

Այն հարցին թե ինչու՞ քաղաքում առկա համաճարակային ճգնաժամի պայմաններում բարեկարգման ծախքերը գերաշռում էին բժշկասանիտարական ծախքերին, կարելի է բացատրել բժշկական ոլորտի, մասնավորապես՝ Աշտարակի հիվանդանոցի՝ Վարչության իրավասության ներքո չգտնվելու հանգամանքով **(ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 87, թ. 130 շրջ.)**:

Չնայած կենտրոնական իշխանությունների հատկացրած սուբսիդիաների՝ քաղաքային բյուջեն ուներ մեծ ճեղքվածք. քաղաքային խորհրդի հաստատած 1920 թ. բյուջեի համաձայն՝ մուտքի (եկամտի) գումարը կազմում էր 1.563.500 ռուբլի, իսկ ելքը (ծախքը)՝ 3.895.600 ռուբլի: Ակներև է, որ քաղաքի ծախսերը մի քանի անգամ գերակշռում էին եկամտային հոսքերին:

Ավելին, քաղաքի իշխանությունների ֆիկսալ կառավարումը, մասնավորապես՝ տեղական հարկերի հավաքագրումը բախվում էր մի շարք խոչընդոտների՝ ի դեմս քաղաքացիների դժգոհությունների, որոնք չէին վարանում դիմել Երևանի Շրջանային դատարանի վարչական բաժին՝ բողոքարկելով քաղաքային խորհրդի և վարչության համապատասխան որոշումները **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 36, 40)**:

Հարկ է նշել, որ քաղաքային բյուջեի եկամտի հիմնական աղբյուրներն էին տեղական հարկերը (օր.՝ փթահարկ, գույքահարկ) և տուրքերը (օր.՝ ալկոհոլային, առևտրային, փեթակի տուրքեր):

Աշտարակի պարենային հիմնախնդիրը: 1919 թ. Աշտարակում պարենավորման հարցով հիմնականում զբաղվում էին կենտրոնական իշխանությունները և Ամերկոմը: Հացի արտադրության և բաշխման համար 1919 թ. դեկտեմբերի 7-ի քաղաքային խորհրդի որոշմամբ վերջինիս տրամադրվեց քաղաքի հացի փուռը և 4 խանութները **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 9)**: Չնայած

վերոնշյալ հանգամանքին՝ պարենային խնդրի լուծումը շարունակում էր մնալ քաղաքային իշխանությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը։ Պարենային ճգնաժամը հաղթահարելու համար ձեռնարկվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք էին ա. կարիքների քարտեզագրում, բ. հացի չեկերի վաճառքի կազմակերպում, վերջիններիս անվճար բաշխումը չքավորներին, գ. առաջին անհրաժեշտության մթերքների սակագների սահմանում։ 1919 թ. դեկտեբերի 23-ին քաղաքային խորհրդի անդամները, լսելով իրավասու Գ. Արամյանի՝ Աշտարակում ապրող արևմտահայերի պարենավորման խնդրի մասին՝ ըստ որի նրանց 80 %-ը մատնված է սովամահության, որոշեցին ա. հանձնարարել Վարչությանը ցուցակագրել և՛ տեղացի, և՛ արևմտահայ չքավորներին, որոնք չէին օգտվում ամերիկյան կայաններից, բ. կեսական անհրաժեշտության միջոցների ձեռք բերման նպատակ դիմել Խնամատարության նախարարությանը (**ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 4**), իսկ փոխառություն ստանալու համար Ներքին գործերի նախարարությանը։ ՆԳՆ Զեմստվո-քաղաքային բաժինն արձագանքեց ՏԻՄ խնդրանքին և պահանջեց ներկայացնել նախահաշիվ։ Ըստ քաղաքային իշխանությունների կազմած նախահաշվի՝ հաց գնելու համար անհրաժեշտ էր 500 հազ. ռուբլի, մսամթերքի համար՝ 200 հազ. ռուբլի, կեռասինի համար՝ 100 հազ. ռուբլի, աղի, գետնախնձորի և այլ մթերքների համար՝ 200 հազ. ռուբլի։ ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը, հիմք ընդունելով վերոնշյալը, կազմեց օրինագիծ՝ ներկայացնելով Նախարարների խորհուրդ (**ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 6-11**), որտեղ էլ արժանանալով հավանության, ուղարկվեց խորհրդարան։ Սակայն հարկ է նկատել, որ խորհրդարանը միշտ չէ, որ նպատակային էր համարում պետական միջոցների տրամադրումը ՏԻՄ-երին։ Այսպես՝ պատգամավոր Վ. Նավասարդյանը 1920 թ. մարտի 3-ին խորհրդարանի նիստում քննարկման ներկայացրեց Աշտարակի քաղաքային վարչությանը 1 մլն ռ. փոխառություն՝ 3 տարի ժամկետով, 3% տոկոսադրույքով հատկացնելու մասին օրինագիծ։ Սակայն

խորհրդարանի Ֆինանսական հանձնաժողովը, պատճառաբանելով, որ կառավարության և խորհրդարանի կողմից նմանատիպ խնդրագրերի մշտական բավարարումը նորակազմ ՏԻՄ-երին զրկելու էր սեփական եկամտի աղբյուր ստեղծելու մղումից, առաջարկեց՝ Աշտարակ քաղաքին չտրամադրել վերոնշյալ գումարը: Դաշնակցական որոշ պատգամավորներ՝ Ա. Ղազարյանը, Ա. Տեր-Միքայելյանը, հանդես եկան օրինագծի օգտին. Ա. Ղազարյանը ևս մեկ անգամ շեշտեց, որ նոր կազմավորված ՏԻՄ-երը առանց պետական օժանդակության չէին կարող գոյություն ունենալ, և մյուս կողմից՝ նրանք այդ գումարները հիմնականում օգտագործում են մթերքներ ձեռք բերելու համար, իսկ ՀՀ ներկա պայմաններում մթերքների ձեռք բերումը «աննշան» գործ չէ: Ա. Տեր-Միքայելյանն Աշտարակի ողբալի կացության համար մեղադրեց կենտրոնական իշխանություններին, քանի որ դեռևս 1919 թ. սեպտեմբերին վերոհիշյալ խնդրանքով Աշտարակի քաղաքային վարչությունը դիմել էր կառավարությանը, եթե այդ ժամամանակ տրվեր համապատասխան օգնություն, ապա քաղաքն արդեն կունենար անհրաժեշտ քանակության հացահատիկ, և, ըստ նրա, Աշտարակին պետք էր տալ ոչ թե փոխառություն, այլ նպաստ: Չնայած հակոտնյա տեսակետներին՝ խորհրդարանը 1920 թ. մարտի 5-ին հաստատեց Աշտարակին 1 մլն ռուբլու վարկ տրամադրելու մասին օրինագիծը **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 6-11)**:

Հարկ է նշել, որ վերոնշյալ միջոցառումները, թեև մեղմացրին, սակայն չլուծեցին քաղաքում առկա պարենային ճգնաժամը: Այն առավել սրվեց ամերիկյան փուռը փակվելուց հետո (1920 թ. մայիսին) և հացի մատակարարումը մունիցիպալ իշխանությունների համար դարձավ գերխնդիրը: Կառավարությունը ստիպված էր նոր աջակցություն ցուցաբերել Աշտարակին և 1920 թ. հունիսի 22-ին հաստատեց պարենավորման նպատակով քաղաքին 5 մլն ռ. փոխարինաբար տալու մասին մեկ այլ օրինագիծը **(ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133$^{1\text{-ին}}$, թ. 126)**:

Այսպիսով, Աշտարակի ՏԻՄ-ը, վեր հանելով և քարտեզագրելով քաղաքի պարենային հիմնախնդիրները, միջոցներ ձեռնարկեց լուծել դրանք՝ օգտագործելով թե՛ ներքին, թե՛ արտաքին ռեսուրսները, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական

իշխանությունների կողմից տրամադրած դրամական միջոցները: Այս ամենի արդյունքում հնարավոր եղավ ինչ-որ չափով կառավարելի դարձնել սոցիալական այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք էին հացի և այլ կենսական նշանակության մթերքների ապահովումը, մթերքների սակագների զսպումը և այլն:

Համաճարակի դեմ պայքար: Աշտարակի ՏԻՄ-ի համար հաջորդ մարտահրավերն առնչվում էր առողջապահական ոլորտին: Այն կանոնակարգելու համար 1919 թ. դեկտեմբերի 7-ին գումարած նիստում քաղաքային խորհուրդը որոշեց ստեղծել Բժշկա-սանիտարական հանձնաժողով **(ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 8)**: Վերոնշյալ հանձնաժողովի անդամները, ինչպես նաև քաղաքագլուխ Վ. Նահապետյանը մշտապես ահազանգում էին համաճարակի և դրա ընդլայնմանը նպաստող հանգամանքների մասին: Այսպես՝ 1919 թ. նոյեմբերի 20-ին Խնամատարության և աշխատանքի նախարարությանն ուղղված գրության մեջ քաղաքագլուխը, նկարագրելով իրավիճակը, նշում է, որ Աշտարակի շրջանում ապրող մոտ 10 հազար արևմտահայ գաղթականություն, 40 գյուղական հասարակություն զրված էին մաքուր ջրից, հետևաբար նրանք օգտագործում էին Քասախ գետի ջուրը, որը, սակայն, հոսում էր մոտ 50 գյուղական համայնքով՝ ենթարկվելով աղտոտվածության: Այս ամենը նպաստում էր որովայնային տիֆով և խոլերիայով հիվանդների թվի աճին: Քաղաքային իշխանություններն առաջարկում էին, փորելով նոր առուներ, Արագածի ստորոտի առատ աղբյուրների ջուրը բերել Աշտարակ՝ քաղաքը զերծ պահելով աղտոտված ջրից վարակվելու վտանգից **(ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 42, թ. 134 շրջ.)**: Խնդրի հրատապությունից ելնելով՝ 1919 թ. դեկտեմբերի 7-ին քաղաքային խորհուրդը Վարչությանը հանձնարարեց սկզբնական աշխատանքների համար ձեռք բերել շինանյութ, հրավիրել ճարտարագետ, կազմակերպել առուների անցկացման աշխատանքներ՝ դրանով իսկ լուծել նաև աշխատատեղերի բացման խնդիրը:

Քաղաքային իշխանության ձեռնարկած հակահամաճարակային միջոցառումներից էր աղբահանության և ախտահանության կազմակերպումը. կառավարության տրամադրած միջոցներով 1920 թ. սեպտեմբերից քաղաքային

վարչությունը կազմակերպեց քաղաքի և նրա կից տարածքների ընդհանուր աղբահանությունը և ախտահանությունը **(ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 490, թ. 1-2)**:

Կրթական քաղաքականություն: 1919-1920 թթ. քաղաքային իշխանություններն աչքի ընկան հատկապես կրթական բնագավառում ծավալած գործունեությամբ, որի արդյունքում վերանորոգվեցին և վերաբացվեցին տարրական դպրոցներ, սկսեց գործել քաղաքային գրադարանը և այլն:

Դեռևս 1918-1919 ուսումնական տարում Աշտարակում չէր գործում որևէ դպրոց, իսկ դպրոցական շենքերում տեղակայված էին ամերիկյան և Մոսկվայի հայկական կոմիտեի որբանոցները **(ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 532, թ. 6)**: Վարչությունը պահանջեց ազատել դպրոցական շինությունները, սակայն վերջիններս հրաժարվում էին, այն դեպքում, երբ մոտ 800-900 երեխա անտերունչ «թափառում» էին փողոցներում **(ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 42, թ. 2)**: Ուստի, դպրոցների վերաբացման համար ՏԻՄ-ը նախաձեռնեց բնակարանների բռնագրավումներ:

Քաղաքային իշխանությունների ջանքերով վերաբացվեցին երկու տարրական դպրոց (550 աշակերտ), որտեղ ուսումը հայտարարվեց անվճար: Աշտարակի դպրոցներում իրենց կրթական իրավունքն էին իրացնում նաև արևմտահայ երեխաները **(ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 15)**: Մեկ այլ կարևոր նախաձեռնություն էր կրթական դրամաշնորհների տրամադրումը. 1920 թ. հունվարի 27-ին քաղաքային խորհրդի որոշմամբ նորաբաց համալսարանի 2 ուսանողների ուսման ծախսերը ևս հոգալու էր ՏԻՄ-ը:

Կրթության նախարարության թույլտվությամբ ՏԻՄ-ի ենթակայության տակ չգտնվող Աշտարակի միջնակարգ դպրոցի տնտեսական մասի կառավարումը ևս ժամանակավորապես վերապահվեց քաղաքային խորհրդին **(ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 87, թ. 107, 130 և շրջ, 142)**:

Անգրագիտության վերացման և շարունակական կրթության ապահովման համար կարևոր էր նաև քաղաքային գրադարանի վերաբացումը: Քաղաքային խորհրդի որոշմամբ «Պռոշյան» գրադարան-ընթերցարանն անցավ քաղաքային իշխանության ենթակայության տակ:

Գործազրկության դեմ պայքար: Քաղաքում առկա գործազրկությունը լուրջ սոցիալական մարտահրավեր էր քաղաքային իշխանությունների համար: Դրա հաղթահարումը դարձել էր առավել օրակարգային՝ հաշվի առնելով Աշտարակում մեծաթիվ գաղթականության առկայությունը: 1920 թ. հունվարին քաղաքագլուխը դիմեց Խնամատարության և աշխատանքի նախարարությանը՝ առաջարկելով հարցը լուծել հասարակական աշխատանքներ կազմակերպելու միջոցով, որոնցում պետք է ներգրավված լինեին գործազուրկներ, ինչպես նաև՝ քաղաքում բացել աղյուսի, կրի, կղմնդրի գարծարաններ **(ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 690, թ. 63)**:

Քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում էին նաև **որբերի հավաքագրման և խնամքի հարցերը**: Ըստ Խնամատարության և աշխատանքի նախարարության պաշտոնական տվյալների՝ 1918 թ. դեկտեմբերին-1919 թ. հունվարին Աշտարակում Ամերկոմի հոգածության տակ կար 7 որբանոց (580 որբ) **(ՀԱԱ, ֆ. 198, ց.2, գ. 49, թ. 1)**: Սակայն որբերի իրավական կարգավիճակի՝ անձնական և գույքային իրավունքների հարցը շարունակում էր մնալ անորոշ: Վերոնշյալ հարցի լուծման համար որոշվեց Վարչությանը կից ստեղծել որբախնամ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր նաև որբերի հոգաբարձության խնդիրներով:

Աշտարակի ՏԻՄ աշխատանքները դրական գնահատվեցին հանրապետության օրենսդիր մարմնի կողմից. դեռևս 1919 թ. դեկտեմբերի 29-ին խորհրդարանի նիստում պատգամավոր Ս. Թորոսյանը, անդրադառնալով Վաղարշապատի և Աշտարակի քաղաքային իշխանությունների գործունեությանը, նշեց, որ Աշտարակում այն «ավելի աշխույժ է» **(ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 51, թ. 5)**:

ՏԻՄ անդամները՝ քաղաքագլուխ Վ. Նահապետյանը և քաղաքային խորհրդի նախագահ Վ. Շահազիզյանը, ակտիվորեն մասնակցեցին համապետական նշանակության միջոցառումներին, մասնավորապես՝ 1920 թ. հունվարին Երևանում կազմակերպված Քաղաղաքային խորհուրդների համագումարի աշխատանքներին: Վերոնշյալ համագումարում որոշվեց ստեղծել Քաղաքների միություն, որին հետագայում անդամագրվեցին մի շարք քաղաքներ, այդ թվում՝ Աշտարակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Աշտարակի քաղաքային իշխանությունները, չնայած ՀՀ-ում առկա քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայունությանը, ձեռնարկեցին պետության և բնակչության համար կենսական նշանակություն ունեցող մի շարք միջոցառումներ.

- Վեր հանվեցին և քարտեզագրվեցին քաղաքի պարենային հիմնախնդիրները: Տեղական իշխանությունների ջանքերի շնորհիվ ձեռք բերվեցին կենսական նշանակության մթերքներ, իսկ անհարկի թանկացումներից խուսափելու համար սահմանվեցին առաջին անհրաժեշտության ապրանքների սակագներ:
- Կարևորելով անգրագիտության դեմ պայքարը և կրթության շարունակականությունը՝ քաղաքային խորհրդը որոշեց վերաբացվել տարրական դպրոցներ և քաղաքային գրադարանը, ինչպես նաև ուսանողներին հատկացնել դրամաշնորհներ:
- Քաղաքային իշխանությունները ձեռնարկեցին սոցիալական անվտանգությանը և կայունությանը նպաստող այլ քայլեր, մասնավորապես՝ համաճարակի և գործազրկության դեմ պայքար, որբերի իրավունքների պաշտպանություն և այլն:

Համառոտագրություններ

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ

Abbreviations

TIM (LSGB) - Local self-government bodies

HAA (NAA) – National Archives of Armenia

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ասատրյան Ա. (2018)**, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները 1918-1920 թթ., «ՎԷմ», հ. 1(61), Երևան, «ՎԷմ հանդէս» հրատ., էջ 229:
2. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 33, թ. 34:

3. ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 4, 25:
4. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 35:
5. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 5:
6. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 26:
7. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 87, թ. 130 շրջ.:
8. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 36, 40:
9. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 9:
10. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 4:
11. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 6-11:
12. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 22:
13. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133[1-ին], թ. 126:
14. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 375, թ. 8:
15. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 42, թ. 134 շրջ.:
16. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 490, թ. 1-2:
17. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 532, թ. 6:
18. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 42, թ. 2:
19. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 15:
20. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 87, թ. 107, 130 և շրջ, 142:
21. ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 690, թ. 63:
22. ՀԱԱ, ֆ. 198, ց.2, գ. 49, թ. 1:
23. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 51, թ. 5:

REFERENCES

1. **Asatryan A. (2018)**, HH teghakan inqnakar'avarman marminnery' 1918-1920 t't'. /HH teghakan inqnakaravarman marminnere 1918-1920 tt./, /The local self-gwvernment bodies of the Republic of Armenia 1918-1920/, Yerevan, «Vem handes» Press. (In Armenian)

2. HAA, f. 201, tsʿ. 1, g. 33, t. 34:
3. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 4, 25:
4. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 35:
5. HAA, f. 201, tsʿ . 1, g. 375, t. 5:
6. HAA, f. 198, tsʿ. 1, g. 2, t. 26:
7. HAA, f. 307, tsʿ. 1, g. 87, t. 130 shrj.:
8. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 36, 40:
9. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 9:
10. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 4:
11. HAA, f. 201, tsʿ. 1, g. 375, t. 6-11:
12. HAA, f. 198, tsʿ. 1, g. 52, t. 22:
13. HAA, f. 199, tsʿ. 1, g. 133[1-in], t. 126:
14. HAA, f. 201, tsʿ.1, g. 375, t. 8:
15. HAA, f. 205, tsʿ. 1, g. 42, t. 134 shrj.:
16. HAA, f. 205, tsʿ. 1, g. 490, t. 1-2:
17. HAA, f. 205, tsʿ. 1, g. 532, t. 6:
18. HAA, f. 205, tsʿ.1, g. 42, t. 2:
19. HAA, f. 198, tsʿ. 1, g. 2, t. 15:
20. HAA, f. 307, tsʿ.1, g. 87, t. 107, 130 ev shrj, 142:
21. HAA, f. 205, tsʿ.1, g. 690, t. 63:
22. HAA, f. 198, tsʿ.2, g. 49, t. 1:
23. HAA, f. 198, tsʿ. 1, g. 51, t. 5:

Анна Асатрян

ИСТОРИЯ ФОРМИРОВАНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ АШТАРАКА (1919–1920 ГГ.)

Заключение

Ключевые слова и выражения: органы местного самоуправления, Аштарак, выборы, городской совет, администрация, городской глава, центральные власти, продовольственное обеспечение, образование, кризис.

В статье рассматриваются выборы органов местного самоуправления, их правовые основы и принципы организации. Также освещаются существовавшие социально-экономические проблемы и меры, предпринятые городскими властями для их преодоления.

Проведённые исследования свидетельствуют о том, что органы местного самоуправления Аштарака рассматриваемого периода действовали в чрезвычайно сложных и нестабильных условиях. Голод, эпидемии и безработица напрямую препятствовали эффективному управлению городом, однако благодаря усилиям городских властей удалось решить ряд актуальных проблем. В частности, были организованы противоэпидемические мероприятия, приобретены жизненно важные товары для удовлетворения потребностей населения, установлены тарифы с целью сдерживания инфляции, возобновлены работы школ, библиотек и других учреждений.

Таким образом, можно констатировать, что несмотря на социально-экономический и психологический кризис в стране, отсутствие соответствующего опыта и низкий уровень правосознания, органы городского управления Аштарака в основном действовали в соответствии с принципом общественной ответственности и способствовали укреплению социальной стабильности.

Таким образом, изучение деятельности органов местного самоуправления Аштарака показывает, что эффективность управления общиной в первую очередь обусловлена способностью быстро и системно реагировать на вызовы, а также готовностью граждан участвовать в делах общины.

Anna Asatryan

THE HISTORY OF THE FORMATION AND ACTIVITY OF ASHTARAK'S LOCAL SELF-GOVERNMENT BODIES (1919–1920)

Conclusion

Key words and expressions: *local self-government bodies, Ashtarak, election, city council, administration, mayor, central government, food supply, education, crisis.*

The article discusses the elections of local self-government bodies, the legal foundations and principles of their organization. It also highlights the existing socio-economic challenges and the measures undertaken by the municipal authorities to overcome them.

The conducted research shows that the newly established local self-government of Ashtarak operated under extremely difficult and unstable conditions. Famine, epidemics, and unemployment directly hindered effective city governance; however, thanks to the efforts of the municipal authorities, it became possible to solve several pressing issues. In particular, anti-epidemic measures were organized, essential goods were obtained to meet the needs of the population, price regulations were introduced to curb inflation, and schools and libraries were reopened.

It can be stated that despite the socio-economic and psychological crisis in the country, the lack of relevant experience, and the low level of legal awareness, the municipal authorities of Ashtarak generally acted in accordance with the principle of public responsibility and contributed to the establishment of social stability.

Thus, the study of the activities of the Ashtarak local self-government shows that the efficiency of community governance is primarily determined by the ability to respond quickly and systematically to challenges, as well as by the citizens' willingness to participate in community affairs.

Աննա Ասատրյան – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Հասարակագիտության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու. annaedisoniasatryan@gmail.com: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի առաջին Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների պատմությունը: https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-7037-9915

Anna Asatryan – Lecturer at the chair of Social Sciences, Armenian State University of Economics, Ph.D in history annaedisoniasatryan@gmail.com. Her research interests include the history of the local self-government bodies of the First Republic of Armenia. https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-7037-9915

Анна Асатрян – Преподаватель кафедры Обществознания Армянского государственного экономического университета, кандидат исторических наук. annaedisoniasatryan@gmail.com Научные интересы включают историю органов местного самоуправления Первой Республики Армения. https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-7037-9915

Խմբագրություն է ուղարկվել 02.02.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 24.02.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.